ՍՈՎԻ ԺԱՄԱՆԱԿԻՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Երբոր Լոռու ձորերից հայ գիւղացին Ալէքսանդրապոլ իւր հնոջ քաղած հոնով աղ առնելու գնայ, հացը պակասած ժամանակ իւր շինած թին կամենայ տանել Շորագեալ հացի հետ փոխելու, կամ պարտք արած փողով ցորեն, զարի գնելու, պէտք է իւր բեռնակիր ձիու հետ անցնի Ջամանլուի հովիտը։

Ջամանլուի ահագին հովիտը կազմում են հանդիպակաց լեռները, որոնց անտառապատ զառիվայրներին երկու կողմից իջնելով, ձորի խորութեան մէջ հանդիպում են սրընթաց կոհակներին փամբակայ ջրի, որ, համառուն սարերից գալով, հովտի երկայնութեամբ վազում է դէպի Լոռու ձորերը։

Այս նեղ հովտում, գետեզերքին տեղ-տեղ բացւում են սիզաւէտ, կանաչ հարթ տարածութիւններ անտառի մէջ. դրանցից ամենամեծը կոչւում է «Արաղի ճալա»։

Սով էր տարին։ Արաղի ճալէն շրջապատող անտառի բերանից — ներքևից դուրս եկաւ մի փալանած ձի։ Մարդ մինչև կարողանար մտածել, թէ այս մենակ ձին կորած կամ փախած պէտք է լինի, դուրս եկաւ և տէրը,—գիւղացի Անդրին։ Մի քանի քայլ հեռաւորութեամբ նա հետևում էր իւր ձիուն, որը տանում էր մեծ փալանի մէջ ձգած իւր ախրոջ հին չուխայի մնացորդները և մի դատարկ խուրջին։ Անդրին ինքն էլ, իւր ձիու նման, բաւական մաշւած մի արարած էր, բայց նոյնպէս ջղուտ ու պիմացկուն։ Աշխատասէր ու տոկուն ռանչպար մարդ էր նա, և, թէև միշտ աղքատ, զարթ բնաւորութեան տէր ու սրախօս։

Այս տարի խեղճ մարդու հացը պակսեց դեռ ձմեռայ կիսին։ Անդրին իւր հարևաններից փոխ առնելով, հարուստներին մուրհակ տալով եօլա գնաց, մինչև գարունը հասաւ, կամ աւելի ճիշտ, մինչև այն օրը, երբ էլ ոչոքից յոյս չունէր փոխ առնելու. շատերը չունէին, ոմանք վախենում էին իրանցն էլ հատնի, ոմանք էլ նրա թախանձանքին պատասխանում էին—«Ինչ որ ունել ենք դեռ գնա էն բեր...»։ Մի խօսքով սովի ահարկու պոզերն արդէն երևում էին դատարկած հորերից։

Եւ ահա գարունը նոր բացւած Անդրին իւր Ղազարի հետ (այսպէս էր անւանում ձիուն) ճանապարհ ընկաւ դէպի Ծորագեալ, կամ, ինչպէս իրանք են ասում դէպի ւվերև։

Շատակեր Շարայի շատաբեր գաւառը մօտիկ լեռնաբնակ հայերի միակ ապաւէնն է հացապակաս ժամանակներում։ Լոռին, իբրև լեռնային երկիր, չաճախակի երկարատև անձրևներով հացը կորում է և գիւղացիք Անդրու նման ձին փալանում են գնում Ծորագեալ։

Անդրին մտազբաղ հետևում էր իւր ձիուն և ինքնիրան մտմըտում։

«Կերթամ Ծորագեալ, Թուշ իմ ծանօթ Ղազարոնց Մկոյի տունը... ինձ որ տեսնի շատ կ'ուրախանայ՝ «բարով, բարով, քաւոր Անդրի... ւիր ես ծօ մարդ... իմձ ես ծօ... մանչերդ իմձ են...». խուրջինից էլ էն մի քանի դաստայ «ղարա» Թուխթունը որ հանեմ աւելի կուրախանայ... իրիկնահացիցը եդը օդի տախտի վրայ Թինկը կըտանք ու չիբուխ քաշելով զրից կանենք... Կասեմ, որ մեր կողմերը հացի պակասութիւն ենք քաշում... ամա նա ինքը կիմանայ Թէ ընչի եմ գնացել. առաջին անգամը խօ չի... ով գիտի ինձ չը Թողնի էլ Թէ բերանս բաց անեմ, «ինչքան որ կարաս ձիուդ բարձիր, Անդրի ախպէր տար կեր, քեփ արա».—Վայ ես քեզ մատաղ Մկո ջան... յանկարծ, զգացւած Մկոյի ասելիք խօսքերից, լսելի ձայնով բացականչեց գիւղացին և քայլերը արագացրեց. ձայն տւեց և ձիուն, նրան էլ շտապեցրեց։

«Բաս ես ինց դուրս գամ քու պարտքի տակիցը, Մկո ախպէր ջան, շարունակեց նա, էլ ինչ ասեմ. ասելն աւելորդ ա, հալբաթ աշունքը կը գայ, ես գիտեմ... ես քու լաւութիւնը մի ես վճարեմ, որ... ես մահկալ Անդրին եմ. ես ինձ վրայ չեմ Թողուլ ուրիշի

լաւութիւնը... հալա մի էս նեղ տարուցը պրծնեմ, քիւլփաթս սովամահից ազատեմ... ես դիտեմ էլի...»

—Բարի օր, ախպերացու, չանկարծ մի ձայն եկաւ ներքևից։

Իւր ցնորմունքից սթափւեց Անդրին և տեղն ու տեղը իսկոյն կանգնելով ներքև նայեց։—Ճամբու տակի աղբիւրի մօտ տեսաւ մի սպիտակ չուխաւոր մարդ։ Անդրին իսկոյն ճանաչեց, որ նա կռօ է (շորագեալցի). միայն նրանք են սպիտակ չուխայ հագնում, իսկ իրանց երկրում այդ ամօթէ։

Շորագեալցուց փոքր ինչ հեռու նրա կինը թոկի ծայրը բըռնած արածացնում էր իրանց ձին։ Իսկ նրանց մանկահասակ աղջիկը գետեզերքին լանում էր երեսը փոքրիկ եղբօր, որի ուրախ ճըճուղը խլանում էր լեռնային գետի գոռոցի միջից։

Շորագեալցին զարմացել էր Անդրուց, որ պէլացել էր իրանց վրայ, և տեսնելով իւր պատասխանն ուշանում է կրկին ձայն տւեց.—առաջ բարի, ախպէրացու... ձրտեղանցի ես.

«Փուշու հէշ՛շ» մարդուն պատասխանելու տեղ Անդրին կանչեց իւր ձիուն, որ հեռացել էր բաւական։ Ցոգնած անասունը իսկոյն կանգնեց և սկսեց արածել ճամբի կողքի կանաչը։

Երբոր տեսաւ ձին կանգնեց, Անդրին ճանապարհից դուրս եկաւ, կանգնեց ներքի եզերքին և սկսեց բարձր գոռգոռալ, կարծես ուզում էր վախացնել անծանօթին։

—Աստծու բարին, բարեկամ, ձրտեղանցի ես, բարեկամ.

—Որթնաւեցի եմ։ Դու որտեղացի ես, ձւր ես գնում, խէր ըլի. իւր ձայնն էլ բարձրացրեց վերևեցին։

—Ես Դսեղեցի եմ. էդ ձւր տանում էդ օղլուշաղը։

—Ահ չկայ խու ճամբէքին։

—Ձէ, արխէյին գնա. ուր էք գնալու։

—Քարնջեցի Մատնանց Գիքորը ճնցաւ։ Փոխանակ պատասխանելու հարցրեց Շիրակեցին։

—Լաւ են, փառք Աստծու։

—Նրանց տունն ենք գնում։

—Դու նրանց փեսէն ՞ես։

—Հրամանք ես։

—Դու Գոքորն ՞ես։

—Հրամանք ես։

—Ա՛յ տղայ, էդ մեր նազլուն ա։

—Հրամանք ես։

Խօսակցութիւնն այստեղ ընդհատեց Անդրին և լուռ հեռացաւ, գնաց իւր ձին բերեց արձակեց գետափի խոտերում, մօտեցաւ ճամբորդներին.

Առանց ձեռք տալու իրար բարևեցին և երեսները դէպի գետի կողմը նստոտեցին երկու գիւղացիները։

—Բա դու ո՞վ ես, ամօթ չըլի հարցնելը, դիմեց շիրակեցին։

—Որ ասե՞մ կը ճանաչե՞ս։

—Բալքի ճանաչում եմ. ով գիտի։

—Ինձ մանկալ Անդրի կասեն. ճանաչում ե՞ս։

—Ջէ, ախպէր, սուտն ինչ ասեմ։

—Հա, տեսնում ես, չես ճանաչում, յաղթական կերպով նկատեց Անդրին և ինքը հարցրեց։

—Բա ես որթնաւեցի մի բարեկամ ունիմ, կը ճանաչե՞ս։

—Ո՞վ ա, հալբաթ որ կը ճանաչեմ։

—Ղազաքոնց Մկոյին կը ճանաչե՞ս։

—Լա՛ւ։

—Ո՞նց ա։

Ծանկարծ մրմնեց շիրակեցու դէմքը, կարծես թէ նեղացաւ.—ա՛նչպարը որ ուտելու հաց չունենայ ոնց կըլի, ծանր հառաչելով խօսաց նա և յօնքերը կիտեց անթարթ նայելով մի հեռու կէտի։

—Ո՞նց թէ... հանց չկայ Շորագետալ, սարսափելով բացականչեց լոռեցին և չռած աչքերը սևեռեց Գոքորի դէմքին։ Նրա աչքերում այդ րոպէին տխուր վրդովմունքով փայլատակում էր նրա հոգին։

—Ո՞վ կը տայ. սրտաբեկ արտասանեց վերևեցին և կարճ լռութիւնից յետոյ աւելացրեց, առանց Անդրուն նայելու.

—Հրէս կնիկս, երեխերքս հաւաքել եմ, գամ անորս մօտ էս մի երկու ամիսն անցկացնեմ... մինչև տեսնենք Աստծ ինչ դուռը բաց կանի։

Անդրին չլսեց. նա դեռ ապշած էր Գոքորի դէմքին. ավեր կեանամ սրան սպանեմ, կտոր-կտոր անեմ, անցնում էր նրա մտքովը. ջնց անեմ, որ սիրտս հովանայ... սա էս ինչ ասաց։

—Էդ ինչ ասեցիր... վայ քու մէջքը կոտրի, յանկարծ արթնածի նման գոչեց Անդրին, ախր էդ ոնց էլաւ։

—Էլաւ էլի, չորալինից հացը նւազ եկաւ, էլած չէլածն էլ ինչ մուշտարի եկաւ ծախեցինք... ձմեռն էլ մեր քօւ բաղտիցը երկարեց... ճեացինք ձեռներուս ծոցներիս նստած... սատանի ծնունդները հոտիցն իմանում են, որ սով պէտք է ընկնի, գալիս են լաւ գին տալիս տաշտի հացն էլ տանում... մենք էլ փողին թամահ ենք անում... այ շատ լաւ էլաւ. մեր հաճն ա... Թող հմի սոված կոտորենք...» և երկուսն էլ լռեցին։

Այդ մի դառն և ծանր լռութիւն էր. և յուսահատութիւնը կամաց մօտենում էր նրանց սրտերին։

Հէշտ յուսահատող մարդ չէ գիւղացին։ Նա լուռ ու մունջ գերի է կեանքի պատահմունքների և մշտապատրաստ զոհ բնութեան պատահարների.—մի ախտ յանկարծ կոտորում է նրա անասունը, կարկուտն է տանում արտը, մի արտասովոր շփոթ խլում նրա աշխատանքի ժամանակին ու արդիւնքը... նա իրան սիրտ տալով կրկին նորոգում է իւր արօրն ու գութանը և կրկին մտածում է ապրելու մասին։ Ապրում է բոլոր տարին ցամաք հաց ուտելով, և այդ ցամաք հացն էլ յանկարծ կորում է.

—Բահ մի դու ձեր ես գնում, փորն ընկած ձայնով հարցրեց Անդրին։

—Առեցի անորանցս տունն էլի, նոյնպիսի ձայնով պատասխանեց Գոքորը։

—Ո՞ւր ես գնում... անէրըդ խանը ձեռին դռնէդուռը ման ա գալիս ալիր չի գտնում... մեր կողմերը սով ա, սով...

—Կամաց... կիմանայ. դէպի կինն ակնարկելով ահով շշնչաց շիրակեցին և էլ ոչինչ չխոսաց։

«Որ կողմը գնայ մտածում էր նա, ձեր տանեմ կինս, երեխաներս...»

«Վերադառնամ... մտածում էր լռեցին. բայց ինչ ասեմ կնոջս... բայց երեխաներս քաղցած առաջս կը վազեն...»

—Ֆա, մէջնումա, մի քանի անգամ արդէն Նազլուն եռևից մարդուն կանչել էր կիսաձայն։ Նա չիշեցնում էր, որ ժամանակ է ճանապարհ ընկնելու։

Բայց մարդը ամաչում էր եւս մեկ տալ, կնոջ երեսին նայել։ «Ինչ պատասխան տամ սրան... որ կողմը գնում, մտածում էր նա։

Եւ երկու գիւղացիները Զամանլուի հովիտում նստած մտածում էին։

—Գիտես ինչ կայ, Գոքոր, յանկարծ գլուխը վեր քաշելով խոսաց լօռեցին։

—Ինչ կայ։

—Մեր գեղումը մի հարուստ մարդ կայ. եգոր աղա են ասում, մի կատաղած շան տղայ. էս րոպէին էլ ամբարներն ու հորերը լիքը հաց ունի։ Ով որ նաղդ փող ա տալիս թաղարը երեսուն մանէթով հաց ա տալիս, ով որ չէ, թամասուկ ա տալիս թաղարին քառասուն մանէթ, մանէթին էլ ամիսը տաս շահի կամ երեք աբասի շահ։

—Պահ, անխօսափ մարդ, բացականչեց կռօն, նրանից ձվ կը վերցնի։

—Ցծ, ես վերցնում էի, չուեց, շարունակեց Անդրին. համի գիտես ինչ կայ։

—Ինչ կայ.

Դու ղոչաղ մարդ ես, թէ չէ...

—Ինչ ասեմ, ախպեր... և շարած շիրակեցին չգիտեր ինչ պատասխան տայ։

—Գիտես ինչ կայ, խօսքը փոխեց Անդրին, տեսնելով, որ դժուարութեան մէջ է դրել խօսակցին։

—Ինչ կայ։

—Աստծ վեր կունի, որ մի մարդի ամբար լիքը հաց ըլի ու նրա հարևանը սովից մեռնի։

—Իսկի մարդն էլ չի էդ բանին հաւանիլ, համաձայնեց Գոքորը. էդ անօրէնութիւն ա։

—Չէ. արի կարճ քեզ մի ուրիշ բան ասեմ։

—Մի բան ես ուզում ասես, սիրտ չես անում խնամի Անդրի, նկատեց շիրակեցին. ինձանից արխէչին կաց, ինձ չես ճանաչում դու։

—Որ քեզ մի քանի թաղար ցորեն տամ, կարող ես հասցնել Շորագեաձ, վերջապէս յայտնեց Անդրին։

Այս խօսքերի հետ Գոքորի սովից նւաղած աչքերը փայլատակեցին։

—Քանի թաղար, գոչեց նա ուրախացած,—տասը... քսան... երը կըտաս... եգոր աղի...

—Սուս, դոռդոռալ մի... զգուշացրեց Անդրին, ամա գիտես,

ուրիշ մարդ չպէտք է իմանայ... գիշերով պէտք է անցկացնենք... այ այս մօտիկ սարերով... նա ձեռքը մեկնեց դիմացի սարերին։

Այդ րոպէին վերևից մի գոռոց բարձրացաւ. «այ տղերք ձվ էք, հէյ։

Մեր ծանօթները ցնցուեցին, և ետ նայելով տեսան վերևից մի ուրիշ գիւղացի է գալիս. նա գոռգոռալով ուշունց էր տալիս, թռչկոտում, վազում դէպի ցած։

Այս տարօրինակ ուրախ տրամադրութիւնը զարմացրեց գիւղացիներին. «ձվ պէտք է լինի, այսպէս ուրախ այս աղէտի ժամանակ, երբ ժպիտը մեղք է համարւում— եթէ միայն խելագար չի...» մտածում էին նրանք. կարծես նրանց կասկածն աւելի հաստատելու համար մօտեցողը բարձրացրեց իւր գլխարկը և հարբած քէֆի անողի նման սկսեց աղաղակել «հէյ հէյ»։

Գոքորն ու Անդրին, մերթ իրար երեսի նայելով մերթ եկուորին, ծեացել էին ապշած, թէ այդ ինչ էը նշանակէր։

—Ինչ կը տաք, որ ասեմ, մօտենալով աղաղակում էր նա... ինչ էք տալիս, շան տղերք, որ ասեմ...

—Ադա, դու սովիցը խելքդ թռցրել ես, Համբօ, էդ ինչ ես անում, ձայնը բարձրացրեց Անդրին մօտեցողին ճանաչելով։

—Դու ես խելքդ կորցրել, ախմախ, գոռաց Համբօն ու մի ահագին քար շպրտեց նրանց վրայ։ Գոքորն ու Անդրին մի կողմը փախան և քարը թմփթմփալով մինչև գետը մէկ գնաց։

Կռոյի փոքրիկ «մանչը» վախից սկսեց ճչալով լաց լինել։

Իւր քարից շատ չաւշացաւ Համբօն. կանգնեց երկու դիւղացիների առջև և դարձաւ շիրակեցուն։

—Էս ձորումն ինչ ես շինում, տօ սոված կռօ հառամզադայ... այ ես ձեզ էլ ղուրբան ձեր հարսներին էլ... անում դ ինչա... քանի տարեկան ես...

Շորաշալլցին գոյնը թռցրած Համբոյի կամ ոտներին էր նայում կամ երեսին և ոչինչ չէր հասկանում նրանից։

—Սոճն էլ չի էս շաշ ու գժերի հախից գալիս, գլուխը պտըտելով փնթփնթաց Անդրին և չիբուխը սկսեց լցնել։

—Ինչ սով, ասծ, ինչ ես դուրս տալիս գլխիցդ... հրէս Փուրգոններով էնքան ցորեն ա գալիս Ջալալ-օղլի, որ էս ձորերն աճես

կը լցնի... գնա ձին բարձիր տար. հնքան կեր, կիսկիցդ տրաքւես... ինչ ես կառափում բայղուշի նման... հլա փող էլ պտեն տալ, էն էլ չամչի տուր, չէրդ ածա։

—Ինչ ես ասում աղա, դրուստ բան ասա բան իմանանք, սրտատրոփ անհամբերութեամբ հարցնում էին Գոքորն ու Անդրին. ինչ ցորեն, ինչ փող, ինչ ես ասում։

—Դէ իմացէք էլի, թէ մարդ էք իմացէք, որտեղից կըլի։

—Հա, իմացայ, յանկարծ յիշեց Անդրին, էդ էն կըլի... էն ինչ էն տարին մեր գեղական ամբարների ցորենը ծախել տւին փողը տարան, ասեցին որ սով ընկնի ետ կը տանք... ախար ես գիտէի որ էդ կըլի։

—Ցօ, չէ, չէ, ձեռքն Անդրու աչքը կոխեց Համբոն,—Թիֆլիզ, Բաքի, Բաթում, Երևան, Պետրապօլ, Ստամբօլ... ես ինչ գիտեմ, մի խօսքով, որտեղ անունը հայ կայ էլի, իմացել են, որ մեր կողմերը սովա ընկել հաց են հաւաքել, փող են հաւաքել, գիտեմ ոչ քանի հազար թումանն ասեցին, համբարքն էլ մտիցս ընկաւ— զարկում են, որ սով ընկած տեղերը ուանճալարին բաժին անեն։

«Փառք քեզ, Աստած, գիւղացու համար միաք անող, գեղացու դարդը քաշող էլ կայ... զարմացած, իրան իրան խօսում էր կռօն, մինչդեռ Անդրին հարց ու փորձ էր անում Համբոյին։

—Աղա, թէ դու էն կաղէթինն ես ասում, էն ինչ մի երկու շաբաթ առաջ տիրացու Պետրոսը Ջալալ-օղլի կարպաց, էդ պարապ բան ա, կաղէթումը սուտ ու մուտ բաներ շատ են դրում։

—Ա՛յ տղայ չէ չէ, մեր Վարթանը Թիֆլիզից նոր ա եկել, մարդն իրան աչքովը տեսած բան ա ասում... հմի ճամբին փուրդուններով ցորեն ա գալիս էլի, էս օր էգուց կը հասնի Ջալալօղլի։

—Ա՛յ շէն կենան նրանք հա. սկսեցին օրհնել Գոքորն ու Անդրին։

—Էդ հլա Թիֆլիզինն ա, ոգևորւած շարունակեց Համբոն, դրա եղնուց Բաքւինն ա գալիս, նրանից էդը Բաթում, Երևան, Էջմիածին, Շուշի, Շամախի, Նուխի, Մոսկով...

Սով ու ցաւ մոռացած գիւղացիները սրտախոր զգացած լսում էին Համբոյին, և ամեն մի քաղաքի անունի հետ կարծես բարձրանում էին գետնից։

—Հաստատ ըլլեն, հաստատ, հարբածի նման սկսեցին աղաղակել միասին հէնց որ լուեց Համբօն։ Եւ հոգեզմայլ երկար աղօթքէն էին իրանց հարուստ եղբայրների յաջողութեան համար, օրհնում էին գիտեցած բոլոր օրհնանքներով։

Իսկ երբ որ ճանապարհ էին ընկնում Անդրին մօտեցաւ Գոքորին և կամաց փսփսաց—«էն բանը, որ ասեցի, իմ ու քու մէջը ինայ, քարը վեր կալ—քարի տակին դէր, ոքվին չիմանայ... էլ մեր պէտքը չի եղոր աղի հարամ ցորենը... նալլաթ չար սատանին...»